

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ <u>4258</u>
12 MAY 2020
Կից <input type="checkbox"/> <u>16.00</u>
Նշում <u>համաձայն</u>

«12» մայիս 2020թ. N 1501 - Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103034520 առ 15.04.2020թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:
3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վիլեն Գաբրիելյանին՝
 - 1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:
 - 2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:
 - 3) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:
4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վարդուհի Գրիգորյանին՝
 - 1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:


Ոււււ 12 05 20 15 40

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6. Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

12.05.2020

X 

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

№	Առևտրային անվանում	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ	դեղաձև	դեղաչափի և թողարկման ձև (փաթեթավորում)	արտադրող ֆիրման	երկիր	գրանցման հավաստագրի իրավատեր	երկիր	բացթողման և կարգ	Եզրակացության համար և ամսաթիվ	Գրանցման ընթացակարգ
1	Դիկլոֆենակ	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)	լուծույթ ներարկման	25մգ/մլ; (5) ամպուլներ 3մլ բլիստերում	Հենոֆարմ Ա.Դ., 26300, Վրչաց, Բեռզադսկի պուտ բք	Սերբիա	Հենոֆարմ Ա.Դ., 26300, Վրչաց, Բեռզադսկի պուտ բք	Սերբիա	Դ	19194 15.04.2020	Ընդհանուր հիմունքներով (տրկարգ)
2	Սոլպադեի և Ակտիվ	պարացետամոլ, կոֆեին	դեղատեր լուծվող	500մգ+65մգ; (12/3x4) ստրիպում	ԳլաքսոՍմիթԿլայն Դունգարվան ՍՊԸ, Նոքբրաք, Դունգարվան, Ուոթերֆորդ Կո	Իռլանդիա	ԳլաքսոՍմիթԿլայն Քոնսումեր Հելթթեյր (ՄԹ) Թրեյդինգ Լիմիտեդ, 980 Գրեյթ Ուեստ ճ., Բրենտֆորդ, Միդլսեքս SՎ8 9ԳՍ	Միացյալ Թագավորություն	ԱԴ	19195 15.04.2020	Ընդհանուր հիմունքներով (տրկարգ)
3	Քսարելտո	դիվարոքսարան	դեղատեր թաղա	10մգ; (30/3x10) բլիստերում	Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե,	Գերմանիա	Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե, 1,	Գերմանիա	Դ	17616/1 15.04.2020	Ընդհանուր հիմունքներով

		նթասյ ատ		51368, Լներկուզեն		51373 Լներկուզեն				(նոր ցուցում)
--	--	-------------	--	----------------------	--	---------------------	--	--	--	------------------